

# ԽՈՐԷՆ Ա. ՄՈՒՐԱԴԲԵԳԵԱՆ

## ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երկու եւ կէս տարւոյ դատարկութենէ ետքը, տարւոյս Նոյեմբեր 12ին կը պճնազարդուի Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան հինաւորց գահը միւսանգամ տեսնելով հանգուցեալ Գէորգ Գ. կաթողիկոսին արժանաւոր յաջորդը յանձին վեհափառ Խորէն Ա. կաթողիկոսի:

Խորէն Մուրադբեգեան, վեհափառ կաթողիկոսը, ծնած է Տփղիս 1873ին: Հոն Ներսիսեան վարժարանի մէջ կատարած է իւր նախակրթական ընթացքը: Ապա բարձրագոյն ուսմանց համար յաճախած է Մոսկուայի եւ Ժընէվի Համալսարանները:

1901ին ձեռնադրուած է քահանայ. եւ 1910, Սեպտեմբեր 19ին օծուած Մատթէոս Իզմիրլեան կաթողիկոսէն եպիսկոպոս եւ կարգուած Երեւանի թեմին առաջնորդ, որուն փոխ-առաջնորդութիւնը կը վարէր արդէն:

Համաշխարհային պատերազմին, 1915ին, երբ թրքական Հայաստանէն ներգաղթը կը խուժէր դէպի Արարատեան դաշտը, Երեւանի առաջնորդութիւնն էր որ աշխոյժ գործունէութեամբ եղբայրական ձեռք կը կարկառէր փախստականներուն եւ հիւանդ ու սովալլուկ ժողովրդեան առաջին սիւնիանքը կը ջամբէր: Երեւանի Առաջնորդարանը հիւանդանոցի էր փոխուած այն աղէտի օրերուն եւ Խորէն Սրբազան հայրական զթով յոյս կը ներշնչէր ախտաժէտներուն եւ անոնց ցաւերուն սիւնիանքը կ'ըլլար:

1925ին, երբ Գէորգ Գ. կաթողիկոս Էջմիածնի Գերագոյն Խորհուրդը կը հաստատէր, Երեւանի առաջնորդ Խորէն արքեպիսկոպոսին կը յանձնէր ժողովին նախագահութիւնը, վստահ թէ իր ձեռնութեան օրերուն պիտի ընթանան այսու վարչական գործերը յառաջադէմ: Նոյն տիտղոսով ալ Սրբազանը կաթողիկոսին մահունէ ետքն եղաւ Տեղապահ:

Իմաստութիւնը, աշակրջութիւնը, խոհեմութիւնն եւ համբերատար ոգին դաշնակից համախորհուրդ կը թելադրէին Գերագոյն Խորհուրդի նախագահին լուծել զգօնութեամբ օրուան հարցերը փափուկ ժամանակին մէջ: Նա, որ ըմբոստացած էր Յարին հրամաններուն դէմ, երբ տեսած էր ազգային շահերը վտանգի մէջ, այժմ՝ զիտէ լոնել, զիջել, նոյն իսկ հոն ուր վնասը կը գերակշռէ, հաւատացած թէ հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովրդեան ցաւերուն ժամանակը պիտի ըլլայ դարմանիչը:

Իւր սիրալիր, մարդասէր եւ կենցաղագէտ բնավորութեամբ եղած էր Խորէն Սրբազան սիրելի եւ Միաբաններուն եւ ժողովրդեան: Իւր խոհեմ եւ քաղաքագէտ ընթացքով վայելած էր յարգանքը կառավարութեան պետերուն:

Թէպէտ ոժուարին պայմաններու մէջ ձեռք կ'առնէ այժմ՝ Նորընտիր կաթողիկոսը Հայաստանեայց Եկեղեցւոյ ղեկը, ժամանակ մը, երբ մրրիկը կը շարունակէ սպաննալ նախն, բայց փորձագէտ է նաւավարը: Կը մաղթենք որ հրեղէն սինը ուղեցոյց ըլլայ նոր Մովսէսին, հանելու հայ Եկեղեցին յանդրորութիւն եւ ի պայծառութիւն:

ԽՍՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
«ՀԱՆՐԱՆ ԱՄՍՕՐԵԱՅ»

JAMES GEORGE FRAZER — Le dieu qui meurt.  
Traduction française par Pierre Sayn.  
Librairie Orientaliste Paul Geuthner, 1931,  
pp. VII + 317, in 8°, Fcs. 50.—

Հատորս մեծանուն հեղինակին «The Golden Bough» ստուար երկին մէկ մասն է, զոր Փրանսերէնի թարգմանելով՝ զխոնականներուն կը ներկայացնէ Sayn: Այս հատորին մէջ հեղինակը կ'ուզէ ուսումնասիրել ազգերու հաւատալիքներուն մէջ աստուածներու մահկանացութեան մասին եղած աւանդութիւնները եւ այս աւանդութիւններուն իմաստը:

Ինչպէս բազմահատոր երկին ինքնին, այսպէս նաեւ այս առանձին հատորն ուշագրաւ երկու կէտեր ունի. մեծ թերութիւն մը, եւ մեծագոյն առաւելութիւն մը:

Մեծ թերութիւնը հինգած եւ անպաշտպանելի մեթոդն է, որուն Frazer գրեթէ կէս դարէ ի վեր կառչած է եւ որ արդի դիտութեան քննադատութիւններուն չի կրնար դիմանալ: Frazer ալ միշտ ըմբռնած էր կ'երեւայ իր տեսութիւններուն տկարութիւնը, որ ստիպուեցաւ ժամանակի ընթացքին զանոնք եղանակաւորել եւ նոյն իսկ փոխել: «The Golden Bough»-ի առաջին հրատարակութեան (1890ին) մէջ, Frazer սապէս կը բանաձեւէր կրօնի ծագման մասին իր ունեցած տեսութիւնը. նախամարդիկ կ'ընդունէին թէ աշխարհք՝ ա. անձնաւոր էակներէ կը կառուցուի, որոնք իրենց պէս միտք եւ կամք վարուի, որոնք իրենց պէս միտք եւ կամք (ընտելեան ուժերէ). այս երկրորդ մասին մէջ զարգացած է կախարդութիւնը (sympathical magic): Երկրորդ հրատարակութեան մէջ (1900ին) աւելի եւս կը շեշտէ այս երկու (ա. եւ բ.) աշխարհահայացքներու գաղափարները. ա.ին մէջ զարգացած է կ'ըսէ, կրօնքը, իսկ բ.ին մէջ կախարդութիւնը: Արդ «մտքի զարգացման մէջ» կախարդութիւնն իբր «ստորնագոյն իմացական խարդուլութիւնն իբր «ստորնագոյն կրօնքէն աւելի խաւ» հաւանաբար ամենուրեք կրօնքէն աւելի յատուկ եղած է: Ժամանակի ընթացքին մարդիկ սկսան տարակուսիլ կախարդութեան ազդեցութեան վրայ՝ անանձ ուժերը վարեալու, անոր համար բարոյականութեան անձնու, անոր համար բարոյականութեան անձնու գոհարեցութեամբ անոնց բարեացակաւ մութեան արժանանալ ջանացին (հմմտ. էջ 1—2, 231—235):

Այս տեսութիւնը ո եւ է առարկայական փաստով չի՛ հիմնաւորեր Frazer, այլ կը ջանայ ենթակայական հոգեխօսութեամբ մը մասշէլի դարձնել: Ազգախօսութիւնը (ethnologie) բազմաթիւ բնագոյն կը ճանչնայ, որոնք թէեւ քաղաքակրթական շատ սկզբնական աստիճանի մը վրայ են, բայց կրօնքի մասին շատ վեհ եւ Frazerի կարծածէն բոլորովին տարբեր գաղափար մ'ունին:

Հեղինակին այս եւ առհասարակ ամբողջ գործերուն մեծագոյն առաւելութիւնն է նիւթերու անհատուած առատութիւնը: Միայն այս տեսակէտով արդէն, Frazer անհրաժեշտ ըրով մըն է ամէն կրօնախոյզի եւ ազգախօսի: Գրեթէ ամէն ազգի հաւատալիքները համեմատուած են հոն. նիւթերու այս դժուարին համադրութիւնը գրքին մեծ առաւելութիւններէն մէկն է: Սակայն ցանցաւ չեն նաեւ անտեղի եւ նոյն իսկ բռնագրօսիկ համեմատութիւններ: Անոր համար ալ եղբակացուտութիւններ: Անոր համար ալ եղբակացուտութիւններէն եւ վերջնական մեկնութիւններէն մասնք խնդրական կը մնան: Հեղինակը մէկ անգամ կ'անդրադառնայ այս կէտին (էջ 188). «Մեկնեցինք այն օրէնքը, որ կը պահանջէր Նէմիի քուրմին սպանումն իր յաջորդին ձեռքով: Մեկնութիւնս հաւանականութեան սահմանը չ'անցնիր. այս սովորութեան եւ իր մասը չ'անցնիր. այնչափ սահմանափակ պատմութեան մասին այնչափ սահմանափակ է մեր գիտցածը, որ աւելին ըսելու յաւակ է մեր գիտցածը, որ աւելին ըսելու յաւակ է մեր գիտցածը, որ աւելին ըսելու յաւակ է մեր գիտցածը»: Կը փափաքէինք, որ Frazer այս խոստովանութիւնը կրկնէր նաեւ շատ պարագաներու մէջ, ուր հարցերը բոլորովին տարբեր կերպով պէտք էին լուծուիլ (146—149, 151, 153, 155 են):

Գրքին մէջ բազմաթիւ հաւատալիքներ կը յիշատակուին, որոնց զուգակշիռները հայ հին եւ նոր ժողովրդական հաւատքին մէջ կրնանք գտնել: Օրինակի համար սուգի խաղերը (էջ 77—89), որոնք մեռած մարդու մը յիշատակը կը սարքեն ու կը սարքէին Յոյի պատիւ կը սարքեն ու կը սարքէին Յոյի ներք, Հռոմայեցիները, ասիական ու արիւրներու ցեղեր, Կաւկասի Պեւտերները, Աբկեան ցեղեր, Կաւկասի եւ ին նաեւ հին իտալներն եւ այլն, սովորական էին նաեւ հին Հայերու քով. Փաւստոսի համաձայն, յուրաքանչեւ կախարդութեան ժամանակ երկուսը բազմութիւնը կը պարէր երաժշտական գործիքներու ընկերակցութեամբ. «Ապա յետ մահուան ներսիս յորժամ զմեռեալսն լային, հուանն ներսիս յորժամ զմեռեալսն լային, փողովք եւ փանդոք եւ վնօք վկոծան պաբուցն կաքաւելով... արք եւ կանայք... պա-